ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՐՑԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակաշրջանի հարցը պատմագիտական առումով մեծ կարևորություն ունի, քանի որ ռուսական կողմնորոշման հաղթանակը հայ ազատագրական շարժման մեջ ինքնուրույնության նշանակում էր պատմական խոշոր և վճռորոշ շրջադարձ, հրաժարում ազատագրական նախկին գաղափարախոսությունից և մի նոր ուղղության որդեգրում։ Ընդ որում, այդ նոր ուղղությունը միանգամայն ռեալիստական էր և բխում էր պատմական զարգացման ամբողջ ընթացքից։

Ոչ մի կասկածի ենթակա չէ և առարկություն չի վերցնում այն ճշմարտությունը, որ XVII դ. Հայաստանում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած իրադարձությունները թելադրեցին և պայմանավորեցին հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորումը։ Սովետահայ պատմաբանների մեջ վիճաբանության առարկա է միայն այն հարցը, թե XVII դ. որ ժամանակահատվածում էր, որ առաջացավ և ամրապնդվեց ռուսական կողմնորոշումը։ Հայտնի է, որ սովետահայ պատմաբանների մի մասը հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման առաջացումը կապում է Անգեղակոթի ժողովի (1699) և դրանից հետո Իսրայել Օրու ծավալած գործունեության հետ, մինչդեռ մյուս մասը, ելնելով մի շարք պատմական փաստաթղթերից և իրողություններից, գտնում է, որ այն հաղթանակել էր արդեն XVII դ. երրորդ քառորդում։

1921 թ. լույս ընծայած իր աշխատության մեջ[1], որը փաստորեն հայ ազատագրական շարժումների պատմության վերաբերյալ առաջին գործն էր նոր կազմավորվող սովետահայ պատմագրության մեջ, Աշ. Հովհաննիսյանը այն տեսակետն էր զարգացնում, որ մինչև XVIII դ. 20-ական թվականները, այսինքն մինչև Պյոտր I-ի պարսկական արշավանքը և 1720—1730 թթ. հայ ազատագրական շարժումների ծավալումը, խոսք լինել չի կարող այդ շարժման ռուսական կողմնորոշման մասին։ Այդ կապակցությամբ նա գրում է. «...մինչև 1720-ական թվականները ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունը չի սնել, այլև ուղեցույց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մեկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[2]։ Հեղինակին նման եզրակացության հանգելու համար կովան էր ծառայում այն պարագան, որ իբր թե Իսրայել Օրու և Մինաս վարդապետի՝ ռուսական կառավարությանը ներկայացրած և հայ ազատագրական շարժման այլ գործիչների ռուսական կողմնորոշումը վկայող փաստաթղթերի «խոշոր մասը բացարձակ կեղծիք է»[3], դրանք կեղծվել են Մինաս վարդապետի ձեռքով, Մոսկվայում։ Կեղծելով այդ փաստաթղթերը, Իսրայել Օրին և Մինաս վարդապետը «շանքեր» էին թափում «հայ կղերի ե մելիքությանն» մի մասի՝ ռուսներից ակնկալած փրկության «հուսացումը ներկայացնել ռուսներին որպես ժողովրդականություն վայելող քաղաքական երևույթ», մինչդեռ այն «դիվանագիտական մի խաղ էր, որ ռեալ հենակետ չուներ ընթացիկ հայ գիտակցությանմնջ»[4]։ Ելնելով այդ հայեցակետից Աշ. Հովհաննիսյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Այդ օրիենտացիան օտար և անհարազատ էր աշխատավոր ժողովրդին և արհեստական մի պատվաստ նրա մտայնությանը, հայ ավատականության մեռնող շառավիղների փրկության ուղին էր թվում մի ժամանակ, երբ ռուս ռեժիմը դասային իրավունքի և արտոնության միակ

---

1 Աշ. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 26։

4 Նույն տեղում, էջ 63—64։

տպավիճն էր համարվում Անդրկովկասում՝ նեխվող դեսպոտիզմի և պոսթկող տոհմատիրության հանդեպ»[5]։

Հիշյալ աշխատության լույս տեսնելուց ավելի քան երկսուն տարի անց Աշ. Հովհաննիսյանը վերստին վերադարձավ հայ ազատագրական շարժումների և ազատագրական մտքի պատմության հետազոտությանը՝ ուշագրավ և գիտական անժխտելի արժեք ներկայացնող իր երկհատոր մենագրության մեջ[6]։ Այստեղ օգտագործելով նոր, մեծահարուստ գրականություն և փաստաթղթեր, հեղինակը վերանայել է իր արտահայտած նախկին տեսակետը, ավելի ռեալիստական մոտեցում դրսևորելով քննվող հարցերի նկատմամբ։ Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման առաջացման ու ձևավորման տեսանկյունից հետաքրքիր է հատկապես «Դրվագներ...»-ի երկրորդ գիրքը, որտեղ հանգամանորեն քննվում են XVII դ. երկրորդ կեսի և XVIII դ. սկզբի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և քաղաքական իրադրությունը, ներքին ու արտաքին այն դրդապատճառները, որոնք նախապատրաստեցին և սկզբնավորեցին ազատագրության համար մղված պայքարում հայ ժողովրդի, նրա ղեկավար գործիչների քաղաքական շրջադարձը դեպի Ռուսաստան։

Հանգամանորեն ուսումնասիրելով այն բոլոր շփումները, որ ունեին հայ ժողովրդի առանձին գործիչներ մոսկովյան պետության հետ, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ արդեն XV—XVI դդ. հայ ժողովրդի մեջ երևան էին գալիս որոշակի ակնկալություններ ռուսական պետությունից և դրանք էին, որ XVII դարում դրդում էին հարաբերությունների մեջ մտնել Ռուսաստանի հետ. «Հայաստանի ազատագրության գործում Ռուսաստանի մասնակցության նկատմամբ կոնկրետ ակնկալություններ ունեին արդեն 1677 թ. էջմիածնի և 1699 թ. Անգեղակոթի իսորհրդաժողովների կողմից ընտրված պատգամավորությունները։ Այդ պատվիրակությունների առաջ խնդիր էր դրված դիվանագիտական ուղիներ հարթել Հայաստանի ազատագրման համար նաև Մոսկվայի պետության օժանդակությունը ապահովելու համար»[7]։ Ինչպես պարզ երևում է, չժխտելով հանդերձ որոշակի քաղաքական ակնկալությունների առկայությունը մոսկովյան պետությունից, Աշ. Հովհաննիսյանը այն միտքն է զարգացնում, որ վերջինս պետք է հանդես գար օժանդակողի դերում, որ հայ ազատագրական ակնկալությունները դեռևս ամբողջությամբ մոսկովյան պետության հետ չէին շաղկապվում, որովհետև հայ ազատագրական միտքը դեռևս ընթանում էր վաղեմի դիվանագիտական կողմնորոշման ավանդական շառավիղներով, «չկար տակավին այն գիտակցությունը, թե Ռուսաստանը միակ պետությունն է, որից կարելի է իրական օժանդակություն սպասել Հայաստանի ազատագրման համար։ Ոչ Հայաստանի 15—16-րդ դարերի դիվանագիտական բանակցությունները, ոչ էլ դրանց ընթացքից հայ-ռուսական հարաբերությունների բնույթը չեն վկայում այն մասին, թե այդ ժամանակաշրջանում հայերի ազատագրական ակնկալությունները կարող էին կապված լինել բացառապես Ռուսաստանի հետ։ Հայերի ազատագրական հեռանկարները տակավին չէին լծորդված միայն կամ գեթ գերազանցապես Ռուսաստանի քաղաքական հորիզոնների հետ»[8]։

Այդ դեպքում ի՞նչ իրադարձությունների հետ է կապվում հայ ազատագրական մտքի շրջադարձը դեպի Ռուսաստան, ո՞րն է այն վճռական գործոնը, որը պայմանավորեց այդ շրջադարձը։ Աշ. Հովհաննիսյանը դա կապում է Կարլովիցիի 1699 թ. պայմանագրի հետ, որի կնքումով արևմտյան տերությունները, մասնավորապես Հաբսբուրգները, փաստորեն առժամանակ հրաժարվում էին արևելյան ակտիվ քաղաքականությունից։ «Միայն 18-րդ դարի սկզբներից է, որ սկսվում է փոխվել դրությունը։ Մոսկովյան պետությունը միակն էր այդ պահին, որ Մերձավոր Արևելքի նկատմամբ չէր լքել ակտիվ քաղաքականության ուղին և պատրաստ էր օգտագործել առաջին պատեհ հնարավորությունը Սև և Կասպից ծովերի նկատմամբ իր հետամտած նպատակները զենքի միջոցով իրականացնելու համար»[9]։ Եվ քանի որ Կարլովիցիի պայմանագրի կնքումը, որը կտրուկ փոխում էր քաղաքական իրադրությունը, համընկավ Իսրայել Օրու ազատագրական գործունեության ծավալմանը և վերջինիս հարկադրեց փոփոխված իրադրության պայմաններում վերադիրքավորվել, հայ ազատագրական ակնկալությունները կապել Ռուսաստանի հետ. «Հիրավի, միայն՝ այդ պահին կարող էր

5 Նույն տեղում, էջ 67։

6 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, 2, Երևան, 1957, 1959։

7 Նույն տեղում, գիրք 2, էջ 492։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 493։

հասունանալ նրա (Իսրայել Օրու—Ա. Խ.) մեջ այն միտքը, թե պետք է լքել բանակցությունների հին արահետը և շոշափել գործողությունների նոր ուղի՝ բացառապես Ռուսաստանի մեջ որոնելով Հայաստանի ազատագրման ռեալ հեռանկարը։ Եվ հասկանալի է, որ միայն նման հեռանկարի նշմարումով կարող էր սկիզբ առնել հայկական շարժման և հայկական բանակցությունների նոր էտապը, դրանց ռուսական կողմնորոշման էտապը»[10]։ Աշ. Հովհաննիսյանի հենց այս դրույթներն են, որոնք տարակարծությունների տեղիք են տվել սովետահայ պատմագրության մեջ։

Հետաքրքիր է, թե այդ դեպքում ինչպես է գնահատում Աշ. Հովհաննիսյանը XVII դ. 60—70-ական թվականներին վերաբերող այն իրադարձություններն ու վավերագրերը, որոնք, ըստ մեզ, ակնհայտորեն վկայում են հայ գործիչների՝ Ռուսաստանից ունեցած որոշակի քաղաքական ակնկալությունների մասին։ Խոսքը վերաբերում է խոջա Զաքար Շեհրիմանյանի, Ստեփան Ռամադամսկու, Գրիգորի Լուսիկենցի՝ Մոսկվայում վարած բանակցություններին, Նոր Ջուղայի հայ վաճառականական ընկերության հետ ռուսական կառավարության կնքած առևտրական պայմանագրին, Գանձասարի Պետրոս և Էջմիածնի Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների՝ ռուսական արքունիք հղած գրություններին։

Խոջա Զաքար Շեհրիմանյանի և Գրիգոր Լուսիկենցի բանակցությունների հիմքում Աշ. Հովհաննիսյանը դնում է հակաթուրքական կոալիցիա ստեղծելու խնդիրը. «Լուսիկենցը մեկն էր այն գործիչներից, որոնք հակաթուրքական կոալիցիայի մեջ նշմարում էին ինչպես Իրանի, նույնպես նաև բոլոր «քրիստոնեական աշխարհի» բարեկեցության երաշխիքը։ Այս տեսանկյունից ելնելով՝ նա ջանում էր ապահովել Իրանի, Ռուսաստանի և Լեհաստանի քաղաքական համագործակցությունը։ Սակայն որքան էլ կարևոր լիներ այդ մարզում Լուսիկենցի թափած ջանքերը, հայ ազատագրական մտքի պատմության մեջ նա հանգես չէր գալիս որպես նոր ուղի հարթող։ Նա շարունակում էր քաղաքական այն ուղեգիծը, որի կենսագործման համար նրանից առաջ կամ նրանից հետո ջանքեր էին թափում նաև ուրիշները»[11]։

Գանձասարի Պետրոս կաթողիկոսը 1672 թ. դրություն է ուղարկում Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, իսկ «Պետրոս կաթողիկոսի գրությունը ավելին չէր, քան Սպահանի հայ խոջաների օգտին արված բարեխոսություն. հայերից «լավագույնս համարված այդ խոջաներին նկատի ուներ կաթողիկոսը, երբ պաշտպանություն էր աղերսում «հայ ժողովրդի» օգտին»[12]։

Աշ. Հովհաննիսյանը քաղաքական ավելի մեծ կշիռ է տալիս իր իսկ հայտնաբերած և դեռևս 1915 թ. հրատարակած Հակոբ Ջուղայեցու լատիներեն այն նամակին, որը գրված էր հավանաբար 1670-ական թվականների սկզբին և հղված Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, որովհետև այդ գրության մեջ «Էջմիածնի կաթողիկոսը հանդես էր գալիս... ոչ թե Սպահանի կամ Նոր Ջուղայի հայ խոջաների շահերը պաշտպանողի կամ հակաթուրքական կոալիցիայի օգտին միջնորդողի, այլ ճակատագրական տրամադրություններ արտահայտողի դերում»[13]։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գործունեությունը, ռուսական կառավարությունից օգնության հայցերը Իրանի ճնշումների դեմ «օբյեկտիվորեն նոր էին պատրաստում հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման համար»։ Աշ. Հովհաննիսյանը գտնում է, սակայն, որ այն «ինքյան դեռ չէր նշանակում հայ-ազատագրական մտքի քաղաքական վերագիրքավորման արտահայտություն»[14]։

Ամփոփելով իր տեսակետը Շեհրիմանյանի, Լուսիկենցի գործունեության, Պետրոս և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների գրությունների մասին, Աշ. Հովհաննիսյանը դրանց հետ չի կապում հայ-ռուսական քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորումը։ Նրա կարծիքով, «նման դիմումների առկայությունը դեռ առիթ չի տալիս խոսելու հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորման մասին, որչափ չկան փաստական տվյալներ ասելու, թե այդ դիմումները արժանացան Մոսկվայում որևէ ուշադրության»[15]։

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ Աշ. Հովհաննիսյանը հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը բացառապես կապում է Իսրայել Օրու անձի և

10 Նույն տեղում։
11 Նույն տեղում, էջ 487։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում (այս և հետագա ընդգծումները մերն են—Ա. Խ.), էջ 488։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում, էջ 489—490։

գործունեության հետ, թեև հարկադրված է ընդունել, որ մասնավորապես Հակոբ Ջուղայեցու գրությունը օբյեկտիվորեն հող էր պատրաստում հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման համար։ Կարծում ենք, որ այս հարցում դժվար է համաձայնվել Աշ. Հովհաննիսյանի հետ։ Բանն այն է, որ նա հարցն այնպես է դնում, որ կարծեք, թե Իսրայել Օրուն նախորդած գործիչները անպայմանորեն ու հստակ պետք է վերադիրքավորում դրսևորեին քաղաքական կողմնորոշման հարցում, մինչդեռ այդ ամենևին էլ պարտադիր չէ։ Արդեն իսկ այն ակնառու երևույթը, որ հայ գործիչները սկսում են ավելի ու ավելի առնչվել Ռուսաստանի հետ, որոշակի քաղաքական ակնկալություններ կապել նրա հետ, թեկուզև դա լինի հակաթուրքական կոալիցիա ստեղծելու կամ հայ ժողովրդի՝ Իրանի ճնշումներից ձերբազատվելու համար աջակցություն գտնելու հարցում, ինքնըստինքյան այն բանի վկայությունն են, որ Ռուսաստանն արդեն սկսել էր որոշակի տեղ գրավել հայ ժողովրդի ազատագրական ակնկալություններում, որ ստեղծվում էին քաղաքական վերադիրքավորման համար անհրաժեշտ պայմաններ։ Կարծում ենք, որ հարցը պետք է դիտարկել հենց այս առումով և միայն Իսրայել Օրու գործունեության հետ չկապել հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը։ Այս փաստերը խոսում են հօգուտ այն բանի, որ Իսրայել Օրին միայն ավարտին հասցրեց այն գործը, որ արդեն ձեռնարկել էին նրա նախորդները։

Սակայն այս հարցադրումը դեռևս չի ընդգրկում խնդրի էությունը ամբողջությամբ վերցրած, նրա բոլոր կողմերը։ Ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակաշրջանը լուսաբանելիս պետք է նկատի ունենալ նաև, որ «17-րդ դարի 60-ական թվականներից հայ-ռուսական հարաբերություններն առավել ուժեղացան։ Ռուսական արքունիքի և հայկական վաճառականական ընկերության (այսպես կոչված «Ջուղայական կոմպանիայի») միջև 1667 թ. կնքվում են պաշտոնական պայմանագրեր, որով օրինականացվում ու ամրապնդվում են հայ-ռուսական տնտեսական կապերը, փորձեր են արվում Արևելյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի վրա ռուսական պրոտեկտորատ հաստատելու կամ գեթ պարսկահպատակ բրիտոնյաների վիճակը բարելավելու ուղղությամբ։ Հարյուրավոր հայ վաճառականների, նրանց գործակալների ու ծառայողների պարբերական այցելությունները Ռուսաստանի քաղաքները (Աստրախան, Ցարիցին, Կազան, Նիժնի-Նովգորոդ, Մոսկվա, Արխանգելսկ), նրանց շփումները ռուս բնակչության ու պետական գործիչների և հայ գաղթավայրերի հետ լիակատար ծանոթություն էին տալիս երկրի, նրա ռազմական ու տնտեսական մեծ պոտենցիալի, ինչպես նաև նրա արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների մասին։ Աշխարհի գործերին լավատեղյակ հայ վաճառականներն ու նրանց գործակատարները, նվիրակներն ու դիվանագիտական ծառայողները իրենց տեսածի ու լսածի մասին հաղորդում էին հայրենակիցներին, ստեղծելով որոշակի հասարակական կարծիք Ռուսաստանի և նրա ներքին ու միջազգային դրության մասին»[16]։ Ոչ մի կասկած լինել չի կարող այն մասին, որ վերը թվարկված իրողություններն ու երևույթները կարևոր դեր էին խաղում հայ ազատագրական շարժման մեջ ռուսական կողմնորոշման հաղթանակի համար։ Այդ պատճառով էլ սովետահայ պատմագրության մեջ զգալի ուշադրություն է դարձվել վերոհիշյալ երևույթների նշանակությունը մեկնաբանելու հարցի վրա։

Ելակետ ունենալով այն հանգամանքը, որ 1667 թ. առևտրական պայմանագիրը մեծ արդյունք չտվեց, որովհետև պարսկական հում մետաքսի արտածման գլխավոր ուղին շարունակում էին մնալ Թուրքիայի վրայով անցնող առևտրական ուղիները, Աշ. Հովհաննիսյանը այն գնահատում է քաղաքական առումով։ «1667 թ. դաշնագրով արտոնություններ շնորհելով իրանահայ առևտրական ընկերությանը, ցարական կառավարությունը կամենում էր խորացնել Իրանի և Թուրքիայի միջև եղած քաղաքական անշրջետը։ Դրանով միաժամանակ նպատակ էր դրվում սեպ խրել իրանահայ խոշորների և արևմտաեվրոպական պետությունների արանքը»[17]։ Հիրավի, եթե չմոռանանք, որ Մոսկվայում ունեցած իր բանակցությունների ընթացքում Գրիգոր Լուսիկենցը շոշափում էր նաև քաղաքական բնույթի հարցեր, որոնց շարքում առաջնահերթ նշանակություն ուներ Թուրքիայի դեմ Իրանի մասնակցությամբ քրիստոնեական պետությունների կոալիցիայի ստեղծումը, ապա պարզ կդառնա, որ Իրանի և Թուրքիայի հակադրումը միմյանց, նրանց միջև քաղաքական վիճի խորացումը կարևոր տեղ պետք է գրավեր ռուսական արտաքին քաղաքականության ընթացքի մեջ։ Իսկ այդ բանին մեծապես կարող էր նը-

---

16 Ջ. Տ. Գրիգորյան, Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմության պարբերացման մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 231)։

17 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք 2, էջ 442։

պաստել հայ վաճառականների տարանցիկ առևտրի ավանդական ուղիների շեղումը Ռուսաստան, որով նաև տնտեսական զգալի վնասներ կարելի է պատճառել Թուրքիային, զրկելով նրան մաքսային հասույթներից։

1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագրին անդրադարձել են սովետահայ մի շարք ուրիշ պատմաբաններ ևս և արտահայտել են Աշ. Հովհաննիսյանի տեսակետին հակառակ և բավական հիմնավոր կարծիքներ։ Դեռևս 1947 թ. անդրադառնալով այդ պայմանագրին, Վ. Ոսկանյանը շեշտում էր, որ պայմանագրի կնքումով ռուսական կառավարությունը հետապնդում էր տնտեսական և քաղաքական որոշակի նպատակներ։ Երև տնտեսական առումով նա նպատակ ուներ ավելացնել գանձարանի հասույթները, ապա քաղաքական ասպարեզում նրա նպատակը Անդրկովկասը Ռուսաստանի արևելյան քաղաքականության պլացդարմ դարձնելը և կապերը Արևելքի հետ ամրապնդելն էր, ինչպես նաև Թուրքիայի տրանզիտային դերի թուլացումը[18]։ Այդ նույն տեսակետն է զարգացնում նաև Վ. Բարխուդարյանը[19]։

1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագրին մեծ կարևորություն է տալիս նաև Վ. Պարսամյանը։ Նա գտնում է. «Այդ պայմանագիրը ինչպես հայերի, այնպես էլ Ռուսաստանի համար ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն ունեցող կարևոր փաստաթուղթ է»[20]։ Պայմանագիրը նպատակ էր հետապնդում «Տնտեսական և քաղաքական սերտ կապեր հաստատել Պարսկաստանի և Կովկասի հետ՝ հայրենի առևտրին զարկ տալու, իր դիրքերն ամրապնդելու և նրանց հետ միասին Թուրքական ագրեսիայի դեմ պայքարելու համար»[21]։ Հարցը զուտ հայ-ռուսական հարաբերությունների տեսանկյունից դիտելով, Վ. Պարսամյանը կարծում է, որ այդ պայմանագիրը «հաստատուն հիմքերի ու լայն ուղիների վրա դրեց հայ-ռուսական տնտեսական կապերը և ամուր հող պատրաստեց նրանց քաղաքական կապերի համար»[22]։ Հեղինակի այս եզրակացությունը ճիշտ է։

Հայ-ռուսական առևտրական պայմանագիրը և հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ դրա նշանակության հարցը բավականին հանգամանորեն վերլուծել է Զ. Գրիգորյանը։ Համառոտակի ներկայացնելով պայմանագրի պարունակած հոդվածների բովանդակությունը, նա հետևյալ գնահատականն է տալիս պայմանագրին. «1667 թ. պայմանագիրը առաջին պաշտոնական առևտրական պայմանագիրն է՝ կնքված հայերի և ռուսական կառավարության միջև։ Նա իր ժամանակին լիովին արտահայտում էր ինչպես ռուսական կառավարության, նույնպես և հայ վաճառականության տնտեսական շահերը։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ պայմանագիրը տարածվում է ոչ միայն Ջուղայի հայ առևտրական ընկերության, այլև Ռուսաստանի հետ առևտուր անող բոլոր հայ վաճառականների վրա»[23]։ Ինքնըստինքյան բազմանշանակ երևույթ է, որ Նոր-Ջուղայի հայ վաճառականական ընկերությունը պայմանագիր էր կնքում մի մեծ ու հզոր երկրի կառավարության հետ, երևույթ, որ աննկատ չէր կարող մնալ հայ իրականության մեջ։ Այն, լիովին արտահայտելով երկու կողմերի տնտեսական շահերը, չէր կարող չունենալ նաև քաղաքական հեռագնա նպատակադրումներ. «...ռուսական կառավարությունը հայ վաճառականներին, 1667 թ. կնքված պայմանագրով և 1673 թվականին այդ պայմանագիրը վերահաստատող հրամանագրով, հակառակ ռուս վաճառականների բացահայտ դժգոհություններին ու բողոքներին, չէր կարող տալ այդպիսի արտոնություններ, եթե նկատի չունենար բացի տնտեսական շահերից, նաև իր քաղաքական շահերը»[24]։

Հայ-ռուսական 1667 թ. առևտրական պայմանագրի քաղաքական դերը ընդգծում է նաև Գ. Գալոյանը. «Հովանավորական քաղաքականությունը ոչ միայն նպաստում էր հայերի առևտրի աշխուժացմանը Ռուսաստանում, այլև հայկական գաղութների ամրապնդմանը Աստրա-

---

18 Տե՛ս В. К. Восканян. Новоторговый устав и договор с Армянской Компанией (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 6, էջ 29—43).

19 Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 43—44։

20 Վ. Ա. Պարսամյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 7, էջ 74)։

21 Նույն տեղում, էջ 74—75։

22 Նույն տեղում, էջ 78։

23 Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, էջ 40—41։

24 Նույն տեղում, էջ 86—87։

Իրանում, Մոսկվայում և այլ տեղերում։ Այդ քաղաքականությունը վկայում էր նաև հայերի հետ քաղաքական կապերն ամրապնդելու շահագրգռվածության մասին։ Հայ տիրող դասակարգերը ևս ձգտում էին առևտրական ուղիները օգտագործել Ռուսաստանի հետ քաղաքական կապերի ամրապնդման համար, հույս ունենալով վերջինիս պաշտպանությամբ ազատագրվել թուրքական և պարսկական կախվածությունից»[25]։ Ինչպես տեսնում ենք, Զ. Գրիգորյանը և Գ. Գալոյանը 1667 թ. պայմանագիրը ուղղակի առնչում են հայ ազատագրական շրջանների քաղաքական ակնկալություններին, Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու ձգտմանը։

Հայտնի է, որ Գրիգոր Լուսիկենցը և մյուսները առևտրական պայմանագրի կնքումից զատ, հետապնդում էին նաև որոշակի քաղաքական նպատակներ, հատկապես հակաթուրքական կոալիցիայի ստեղծում։ Անդրադառնալով Գր. Լուսիկենցի առաքելության այդ կողմին, Զ. Գրիգորյանը գրում է. «...Գրիգոր Լուսիկյանը, Մոսկվա գալով..., ռուսական արքունիքի որոշ-պաշտոնական անձանց հետ ունեցել է նաև հայ ժողովրդի ազատագրությանը վերաբերող բանավոր զրույցներ»[26]։ Նա վկայակոչում է այն փաստը, որ 1672 թ. Լուսիկյանը իր հետ Մոսկվա էր բերել Գանձասարի Պետրոս կաթողիկոսի՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հղած նամակը։ Նա ուշադրություն է հրավիրում նամակի հետևյալ տողերի վրա. «Եվս ազօթենք տեառն մերոյ աստուծոյ, որպեսզի բազմապատկի ու ամրապնդի քո և ք.։ տերության փառքը և հնազանդեցնի ամենայն թշնամյաց առ ոտս քո զերթ Սողոմոն և սատար կանգնես մեր ժողովրդին, որպեսզի անհավատների մեջ չմնա առանց ապաքինման...»[27]։ Այս տողերը իսկապես վկայում են, որ այդ ժամանակ արդեն հայ գործիչները քաղաքական որոշակի ակնկալություններ ունեին Ռուսաստանից։

Այնուհետև Զ. Գրիգորյանը մատնանշում է, որ հայ և ռուս ժողովուրդների պատմության մեջ խիստ կարևոր է 1670-ական թվականների սկզբին վերաբերող Հակոբ Ջուղայեցու նամակդիմումը։ Նա գրում է. «Վերին աստիճանի կարևոր այս փաստաթուղթը լավագույն վկայությունն է այն բանի, որ հայերը, հանձին Ռուսաստանի, տեսնում էին ռեալ մի ուժ, որի օգնությամբ նրանք կարող էին ազատագրվել պարսկական լծից։ Այլ կերպ ասած՝ սա մի պաշտոնական փաստաթուղթ է, որը ցույց է տալիս հայերի ռուսական օրիենտացիան դեռևս 17-րդ դարի 70-ական թվականների սկզբներին»[28]։ Ի մի բերելով վերոհիշյալ բոլոր փաստերը, Զ. Գրիգորյանը անում է հետևյալ ընդհանրացնող եզրակացությունը, որ դրանք պետք է դիտել, որպես «շատ որոշակիորեն արտահայտված հայ հասարակական լայն շրջանների տրամադրությունների, նրանց ցանկությունների ու կամքի արդյունք, Ռուսաստանից նրանց սպասելիքների արտահայտություն։ Դրանք վկայություններ են պատմական այդ ժամանակաշրջանում արդեն հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի մասին»[29]։ Նա այն կարծիքն է հայտնում, որ վերը նշված բանակցությունները, դիմումներն ու գրությունները արդեն իսկ սկիզբ են դնում հայերի պաշտոնական քաղաքական հարաբերություններին Ռուսաստանի հետ[30]։

Քննելով հայ-ռուսական հարաբերությունների պատմական զարգացման ընթացքը և հատկապես ծանրանալով XVII դարի վրա, Զ. Գրիգորյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Հայերի ռուսական օրիենտացիայի կազմավորումը ապրել է երկարատև մի ժամանակաշրջան և իր քաղաքական ձևավորմանը հասել 17-րդ դարի երկրորդ կեսին»[31]։ Հետագայում նա ավելի է ճշգրտում իր տեսակետը և կոնկրետացնում հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակը։ «Մեր կարծիքով,— գրում է նա,— հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումն ապրել է կազմավորման ու հաստատման բավականին երկարատև պրոցես և իր ձևավորմանը հասել 17-րդ դարի երրորդ քառորդին»[32]։ Ինչպես տես-

---

25 Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 68։

26 Զ. Տ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 87։

27 Армяно-русские отношения в XVII в. Сб. документов. Подготовили к печати В. К. Парсамян, С. А. Тер-Авакимова, под ред. В. А. Парсамяна, Ереван. 1953, с. 92.

28 Զ. Տ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 88—89։

29 Նույն տեղում, էջ 90։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 91։

32 Զ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, էջ 85։

նում ենք, հանգամանորեն քննարկելով խնդրո առարկա պրոբլեմը, Զ. Գրիգորյանը միանգամայն որոշակի և համոզիչ հիմնավորում է այն դրույթը, որ հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումն արդեն XVII դ. երրորդ քառորդում հասել է իր ձևավորմանը։

Վ. Ոսկանյանը, որը Լուսիկենցի գործունեության հետ կապված վավերագրերի առաջին հետազոտողն է եղել, գրում է, որ նա ամեն կերպ շանում էր ամրապնդել Ռուսաստանի գիրքերը Անդրկովկասում, ճանաչել տալ նրա իրավունքները Վրաստանում, Իրանն ընդգրկել Ռուսաստանի և Լեհաստանի հետ նույն կոալիցիայի մեջ ընդդեմ Թուրքական ագրեսիայի և այդ բոլորով հանդերձ հող նախապատրաստել Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասը ազատագրելու համար[33]։ «Հետաքրքիր է, որ Գր. Լուսիկովը՝ շահի դեսպանորդը, փաստորեն վստահված անձ էր նաև Ռուսաստանի համար։ Սուլթյան շահը նրան նույնիսկ մեղադրեց այն բանում, որ նա ռուսաց ցարի հավատակիցն է և նրան է ծառայում»[34]։ Վ. Ոսկանյանը գրում է նաև, որ Լուսիկենցը Լոանդով ձգտում էր, որպեսզի շահը ճանաչի «վրաց արքայազն Նիկոլայ Դավիդովիչի իշխանական իրավունքները և նրա անկախությունը Իրանից, որը նշանակում էր Վրաստանի խաղաղ ազատագրում, Ռուսաստանի պրոտեկտորատի հաստատում»[35]։ Այնուհետև, սերտ կապերի մեջ լինելով Իրանում Լեհաստանի դեսպան, հայազգի Բոգդան Գուրդիի հետ, Գրիգոր Լուսիկենցը «շանում էր բարենպաստ հասարակական կարծիք ստեղծել հեռուստ հակաթուրքական կոալիցիայի, առաջին պլան մղելով Լեհաստանի և Պարսկաստանի հետ Ռուսաստանի դաշինքի կազմակերպումը»[36]։ Սակայն, ինչպես նշում է Վ. Ոսկանյանը, Գր. Լուսիկենցը և նրան շրջապատողները միակ գործիքները չէին, որոնք քաղաքական կապեր էին հաստատում մոսկովյան պետության հետ, «Հայաստանի վիճակը թեթևացնելու նպատակով Ռուսաստանին էին գիմում նաև կաթողիկոսները»[37]։ Այս կապակցությամբ նա վկայակոչում է Գանձասարի Պետրոս և Էջմիածնի Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների գրությունները։

Այս բոլորի հիման վրա Վ. Ոսկանյանը եզրակացնում է. «Հայ ժողովրդի լայն խավերի աճող գժգոհությունը սոցիալական և ազգային հնշման ուժեղացումից, «ֆրանկների խաչակրաց արշավանքիս» նկատմամբ անիրականալի պատրանքային հույսերի աստիճանաբար հոդ ցրնդելը մի կողմից, Թուրքիայի և Պարսկաստանի հետագա թուլացումն ու անկումը, Ռուսաստանի միջազգային գերի ուժեղացումը և նրա արևելյան քաղաքականության ակտիվացումը մյուս կողմից, նպաստեցին ռուսական կողմնորոշման գենեզիսին որպես հայ ժողովրդի ազատագրության ծրագրի»[38]։ Այնուհետև նա կանգ է առնում 1678 թ. Էջմիածնի և 1699 թ. Անգեղակոթի ժողովների, Իսրայել Օրու և Մինաս վարդապետի, Եսայի Հասան-Ջալալյանի գործունեության վրա և անում այն հետևությունը, որ «հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը ստեղծավորվել և ձևավորվել է 17-րդ դարում—18-րդ դարի սկզբին»[39], այնպես էլ չկոնկրետացնելով և չճշգրտելով ավելի որոշակի ժամանակաշրջան, թեև այդ նույն հոդվածի վերջում գրում է, որ «հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը դարձավ համաժողովրդական ծրագիր, հայ ժողովրդի պատմական զարգացման ուղեցույց աստղ սկսած 17-րդ դարից և մինչև մեր օրերը»[40], դրանով ավելի անորոշ դարձնելով իր ձևակերպումը, որովհետև XVII դարը ամբողջությամբ չի կարելի համարել հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ժամանակաշրջան։

Ավելի հանգամանորեն Գր. Լուսիկենցի գործունեությանը և դրա գնահատականին Վ. Ոսկանյանը և Վ. Բարխուդարյանը անդրադարձել են հայ-ռուսական պատմական կապերին նվիրված իրենց գրքում։ Ընդգծելով, որ 1667 թ. հայ-ռուսական առևտրական կապերի հետագա զարգացումը պարարտ հող ստեղծեց հայ-ռուսական հարաբերությունների հետագա առաջընթացի համար, նրանք մատնանշում են, որ դրանից հետո է, որ ավելի է ծավալվում

---

33 Տե՛ս В. К. Восканян, Русско-армянские отношения в XV—начале XVIII вв. и формирование русской ориентации армянского освободительного движения (Из истории вековой дружбы, Ереван, 1983, с. 17).

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում։

38 В. К. Восканян. Նշվ. աշխ., էջ 18—19։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 27։

40 Նույն տեղում։

Լուսիկենցի քաղաքական գործունեությունը, ընդգրկելով այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին ինչպես հակաթուրքական կոալիցիայի ստեղծմանը, այնպես էլ ռուս-պարսկական բանակցությունների միջոցով Պարսկաստանից անկախ կամ գեթ կիսանկախ Վրաստանի ստեղծմանը, որի սահմանների մեջ պետք է ներառվեր նաև Արևելյան Հայաստանի մի մասը ռուսական դաստիարակություն ստացած և առ այդ ռուսական կողմնորոշում ունեցող արքայազն Նիկոլայ Դավիդովիչի գլխավորությամբ։ «Ինչ,— գրում են նրանք,— հայ-վրացական միասնական իշխանություն ստեղծելու նախագաղափարն էր՝ կապված ռուսական օգնության հետ»[41]։

Ինչ վերաբերում է հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակի հարցին, հեղինակները հետևյալն են գրում. «Հայերի ազատագրության գործը ռուսական պետության հետ կապելու գաղափարը հանկարծակի չի ծնվում, այլ պատմականորեն նախապատրաստվում է 17-րդ դարի ընթացքում՝ որպես օբյեկտիվ հետևանք Թուրքիայի և Պարսկաստանի աստիճանական թուլացման, հայության վիճակի վատթարացման, Արևմուտքից սպասվող «փրկության» պատրանքի ազդեցության հետևողական թուլացման և ռուսական պետության ուժեղացման»[42]։

Բերված օրինակներն ու փաստերը հաստատում են այն, որ հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակի հարցում սովետահայ պատմագրության մեջ միասնական կարծիք գոյություն չունի։ Ոմանք այն կապում են Իսրայել Օրու՝ Մոսկվայում ծավալած գործունեությանը, ոմանք այն վերագրում են ընդհանրապես XVII դարին, ոմանք էլ այդ դարի վերջին Երևանամյակին։ Կարծում ենք, որ իրավացի են այն պատմաբանները, որոնք ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակը համարում են XVII դարի երրորդ քառորդը։ Եվ ահա թե ինչու։ Հենց այդ ժամանակաշրջանին են վերաբերում այնպիսի կարևոր իրադարձություններ, ինչպես ադամանդյա գահի ընծայատվությունը 1660 թ. բազմանշանակ մակագրությամբ, հայ-ռուսական առևտրական պայմանագրի կնքումը 1667 թ. Զաքար Շեհրիմանյանի, Գր. Լուսիկենցի և այլոց քաղաքական բնույթի բանակցությունները ռուսական արքունիքի հետ՝ Օսմանյան Թուրքիայի դեմ համընդհանուր ճակատ ստեղծելու մտադրությամբ, Գանձասարի և էջմիածնի կաթողիկոսների նամակ-դիմումները, ազատագրական միտումների ուժեղացումը բուն Հայաստանում, Ռուսաստանի միջազգային հեղինակության աճը և այլն։ Այս բոլորը, մեր կարծիքով բավարար հիմք են տալիս պնդելու, որ հենց այդ ժամանակաշրջանում էլ ձևավորվել է հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը։ Այլ հարց է, որ այդ կողմնորոշման քաղաքական հասուն ծրագրերը երևան եկան մի փոքր ավելի ուշ, Իսրայել Օրու մոսկովյան գործունեության ընթացքում։ Իսրայել Օրու ծառայության նշանակությունն այն է, որ նա էլ ավելի խորացրեց և առաջ մղեց, հաստատուն և տևական հիմքերի վրա դրեց այդ կողմնորոշումը։

ВОПРОС ПЕРИОДА ФОРМИРОВАНИЯ РУССКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯНСКОГО ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

А. Р. ХАЧАТРЯН

Резюме

Вопрос периода формирования русской ориентации армянского освободительного движения имеет важное историографическое значение.

Изучение фактического материала показывает, что формирование русской ориентации армянского освободительного движения не было случайным явлением. Оно не являлось результатом субъективных устремлений отдельных видных деятелей армянского освободительного движения, а было порождением ряда социально-экономических и политических факторов.

Анализ исторических фактов выявляет, что начало формирования русской ориентации армянского освободительного движения можно отнести к третьей четверти XVII в.

---

41 Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 51։

42 Նույն տեղում, էջ 83։